ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 412-Ա « 02 » փետրվարի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ԹԻ-ԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.02.2023 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/19» ծածկագրով Կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Ընկերությունը, խախտելով պայմանագրով սահմանված պարտավո-րությունները, սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում չի կատարել պայմանագրով նախատեսված պարտականությունները, մասնավորապես, չի իրականացրել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն, պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներով, միակողմանի լուծել է կնքված Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում՝ 2024 թվականի հունվարի 30-ին և պայմանագիրը հունվարի 31-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝

1. «ԹԻ-ԴԻ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ